

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N՞1

2022թ օգոստոսի 30-ին ժամը 12³⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022- 2023 ուստարվա N՞1 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում կատարվելիք աշխատանքներ մասին
2. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների, հարցաշարերի հաստատում,
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը

Է. Կոկանյանը անդրադարձավ 2022-23 ուստարում ընդունելության արդյունքներին, որը ցավոք հուսադրող չէ, պայմանավորված ընդունված ուսանողների քիչ թվաքանակով` բակալավրիատի 1-ին կուրսում ունենք ընդունված 1 ուսանող, այդ առումով բավականին լավ վիճակ է մագիստրատուրայում, առկա համակարգում ունեն ընդունված 9, իսկ հեռակա մագիստրատուրայում 7 ուսանող, որը նախորդ տարիների համեմատությամբ բավական լավ ցուցանիշ է: Հենց առաջին նիստով պրն. Կոկանյան հիշեցրեց, որ դիմորդների հավաքագրման աշխատանքները պետք է միշտ ուշադրության կենտրոնում լինեն, թեմային առնչվող հարցերը պետք է մշտապես քննարկվեն ամբիոնի նիստերում և բացի այս պետք է շարունակել դպրոցներ այցելությունները և ներկայացնել մեր Բուհ-ը:

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի և ուսումնամեթոդական փաթեթների հաստատումն է: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 1-ին կիսամյակի առկա բակալավրիատի 1- 4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Եվ ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, այս տարի ևս պետք է հաստատվեն տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների առարկայակն նկարագրերը, թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Ըստ պահանջի ուսանողներին դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես էլ ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով: Հեռակա մագիստրատուրա 1-3-րդ կուրսերի դասընթացները ըստ գրաֆիկի տեղի են ունենալու հոկտեմբեր ամսին:

Քննարկման արդյունքում միաձայն`

1.Որոշեցին հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերը:

2.Որոշեցին հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների թեմատիկ տրոհումները:

3.Որոշեցին հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների հարցաշարերը:

Հաջորդիվ է. Կոկանյանը անդրադարձավ ավարտական կուրսերի ավարտական շախատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարմանը: Ամբիոնի կազմած ձևաչափով գիտական ղեկավարները երկուշաբաթյա ժամկետում պետք է ամբիոն ներկայացնեն առնվազն իրենց բեռնվածքում նշված ուսանողների թվով թեմաներ: Հաջորդ նիստով նախատեսվում է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատումը:

Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից է. Կոկանյանը անդրադարձավ դասերի կայացմանը: Նա նշեց, որ ուսանողների բացակայության և դասերի փոփոխության մասին անպայման տեղեկացնել ամբիոնին: Է. Կոկանյանը նշեց, այս ուսումնական տարում դասերը հիբրիդային ձևաչափով /առցանց և լսարանային/ անցկացվելու են միայն առկա մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի համար, իսկ հեռակա մագիստրատուրայում ամբողջությամբ կազմակերպվելու է առերես: Է. Կոկանյանը նշեց, որ չնայած այն հանգամանքին, որ ամբիոնը միշտ վերահսկել է դասերի անցկացման պրոցեսը, ցանկալի է, որ դասերի ավարտին դասախոսները ամբիոնին տեղեկացնեն օրվա դասապրոցեսի մասին կամ հնարավոր տեղափոխությունների մասին, որպեսզի էլեկտրոնային դասացուցակում համապատասխան նշումներ արվեն:

Ընթացիկ հարցերից անդրադարձան 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը: Ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Ն. Բաբաջանյանը նշեց, որ 2022-23 ուսումնական տարում ուսումնական պրակտիկաները կազմակերպվելու են առերես: Ըստ ուսումնական պլանի 1-ին կիսամյակում 6 շաբաթ մանկավարժական պրակտիկա ունեն բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները, որն անցկացվելու է առերես ՀՊՄՀ հենակետային վարժարանում, մեթոդիստ՝ Ա. Դանիելյան, առկա 3-րդ կուրսի ուսանողներ, ովքեր շարունակական պրակտիկա ունեն, շաբաթական 1 օր, այն ևս կազմակերպվում է ՀՊՄՀ հենակետային վարժարանում, մեթոդիստ՝ Ն. Սաֆարյան: 1-ին կիսամյակում 3 և 4 շաբաթ ժամկետով պրակտիկա ունեն ՀԲ 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողները, մեթոդիստ՝ Ա. Ռուբենյան, ովքեր պրակտիկան կանցկացնեն ՀՊՄՀ հենակետային վարժարանում և 3 շաբաթ մանկավարժահետազոտական պրակտիկա ունեն առկա մագիստրատուրայի 2-րդ, հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողները, որոնց պրակտիկան կազմակերպվելու և անցկացվելու է ՀՊՄՀ-ում ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Մագիստրոսները կկցվեն իրենց գիտական ղեկավարների դասընթացներին՝ բակալավրիատի կուրսերում և հնարավորության դեպքում կվարեն դասեր: Բացի դա, ըստ ամբիոնում ընդունված ձևաչափի մագիստրոսներին հանձնարարվում է պատրաստել և ներկայացնել առանձին դասընթացների առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհումներ, դրանց հիման վրա կազմում են թղթապանակներ: Պրակտիկայի ավարտին կազմակերպվում է պրակտիկայի պաշտպանություն, ըստ նախապես սահմանված գրաֆիկի:

Պրակտիկաների համար ևս classroom հարթակում ստեղծվել են առանձին դասընթացներ, որտեղ տեղադրվում են ուսանողների կատարած աշխատանքերը, ընթացիկ հաշվետվությունները և վերջում թղթապանակները:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Ս. Սիմոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°2

2022թ նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
2022- 2023 ուստարվա N°2 հարցումով առցանց նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Ամբիոնի 2022 թվականի հաշվետվության հաստատում,
2. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Օրակարգում ընդգրկված էր 1 հարց` ամբիոնի 2022 թվականի հաշվետվության ներկայացումը և հաստատումը: Է. Կոկանյանը ներկայացրեց ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետվությունը`

- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
- Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:

Հաշվետու տարում /2021 – 2022 ուստարվա 2-րդ կիսամյակ և 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակ/ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում ուսումնական աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով: Մշակվել են «մաթեմատիկա-ֆիզիկա» և «մաթեմատիկա-ինֆորմատիկա» մասնագիտությունների ՄԿԾ-ները: Ապահովվել է դասախոսների մասնագիտական, հետազոտական և ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների առկայությունը: Ընդլայնվել է ուսանողների ներգրավածությունը գիտական հետազոտությունների գործընթացներում, կոնֆերանսներում, սեմինարներում և այլ գիտաուսումնական ու գիտամեթոդական աշխատանքներում:

- Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ուսուցման և ուսումնառության բոլոր աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են համալսարանի կանոնադրության, Գիտական խորհրդի, ֆակուլտետի խորհրդի, դեկանատի և ամբիոնի ընդունած որոշումների հիման վրա: Այդ թվում կիրառվել են համապատասխան ուսումնառության մեթոդներ:

Քննարկվել, վերանշակվել և վերահաստատվել են բոլոր առարկաների առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, առարկայական ծրագրերը և հարցաշարերը:

Ուսումնառության վերջնարդյունքները համապատասխանում են առարկայական նկարագրերով սահմանված վերջնարդյունքներին: Հաշվետու տարում ուսումնական պրոցեսը կազմակերպելու համար կիրառված ինտերակտիվ մեթոդները նպաստել են ուսանողակենտրոն ուսուցմանը:

- Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Հաշվետու տարում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների ուսումնառության արդյունքների գնահատումը իրականացվել է ուսումնական պլաններում նշված ստուգման ձևերով և առարկայական

նկարագրերով սահմանված գնահատման բաղադրիչների հիման վրա Բուհ-ում ընդունված ընդհանուր գնահատման համակարգով: Գնահատումը իրականացնելիս հաշվի են առնվել առարկաների առանձնահատկությունները, լաբորատոր և գործնական դասերը: Գնահատման բաղադրիչների մաս է կազմում նաև classroom էլեկտրոնային հարթակում գնահատվող առաջադրանքները:

Հաշվետու տարվա ընթացքում Բուհ-ի որոշմամբ միջանկյալ ստուգումները և ամփոփիչ քննությունները, այդ թվում ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպվել և անցկացվել են առերես /որոշ դեպքերում հնարավորության դեպքում առցանց՝ ըստ սահմանված գրաֆիկի/:

- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	2	2	-	4	2			
Համատեղող	2	2	2	1	1		1	
Ժամավճարային	-	-	-	-	-			
Ընդամենը	4	4	2	5	3			11

- ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ըստ ուսումնական պլանի առցանց Google classroom հարթակում կազմակերպվել և անցկացվել են բոլոր դասընթացները, մանկավարժական, մանկավարժահետազոտական և ուսումնաճանաչողական պրակտիկաները: Կատարվել են բոլոր նախապատրաստական, ընթացիկ աշխատանքները: Մշտապես ուշադրության կենտրոնում է եղել classroom հարթակում կատարվող աշխատանքները: Classroom հարթակում յուրաքանչյուր պրակտիկայի համար ստեղծվել է առանձին դասընթաց, դասընթացին կցվել են ամբիոնի պրակտիկայի պատասխանատուն, պրակտիկայի մեթոդիստ-ղեկավարը, դեկանատից և պրակտիկայի բաժնից ներկայացուցիչներ: Դասընթացներում տեղադրվել են մեթոդական նյութերը: Տեղի են

ունեցել մեթոդիստների և ամբիոնի պրակտիկայի ղեկավարի պարբերաբար քննարկում-կոնֆերանսներ: Պրակտիկայի վերջնարդյունքները գնահատվել են ըստ սահմանված ընդհանուր կարգի՝ պրակտիկայի պաշտպանություն և թղթապանակի ներկայացում: Դասընթացներում առկա են ուսանողների էլեկտրոնային թղթապանակները:

- ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ և ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ			
Անվանում	Ժամկետ	Ֆինանսավորման ծավալ	Ամբիոնի մասնակից-անդամների քանակ
21T-1C275- « Գրաֆեն/լիթիումի նիոբատ հետերոկառուցվածքի հիմքով դաշտային տրանզիստոր տերահերցային տիրույթի մոդուլատորի համար », 2021	2021-2024 թթ., 3 տարի	20700000 դրամ	3
19IT - 005 «Yb3+ և Tm3+ իոններով լեգիրված լազերային ակտիվ YAG, LuAG և YSAG կերամիկական և միաբյուրեղ նոնաքարերի կառուցվածքային և սպեկտրալ-կինետիկական հատկությունների համեմատական ուսումնասիրություն»	2019-2022	12,000 €	1
Գալակտիկաների էվոլյուցիայի վաղ փուլերի բացահայտումն ակտիվ գալակտիկաների բազմալիքային	2021-2025	-	Մկրտչյան Վարդուհի/ուսանող/

ուսումնասիրության միջոցով			
Faculty research Funding program	2023-2024	-	Ոսկանյան Ֆրիդա/Ուսանող/
Հայ-Իտալական համագործակցային ծրագիր՝ «Yb3+ և Tm3+ իոններով լեզիրված լազերային ակտիվ YAG, LuAG և YSAG կերամիկական և միաբյուրեղ նոնաքարերի կառուցվածքային և սպեկտրալ-կինետիկական հատկությունների համեմատական ուսումնասիրություն»	2023-2024	-	2, Մերի Մարգարյան

- ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
<p>Ամբիոնում զարգանում են հետևյալ հիմնական գիտական ուղղությունները՝</p> <ul style="list-style-type: none"> • Կրթական համակարգի արդի բարեփոխումները և ֆիզիկայի ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման խնդիրը մանկավարժական բուհերում, • Ֆիզիկայի ուսուցման կատարելագործումը մանկավարժական բուհում և հանրակարթական դպրոցում, • Կրթական համակարգի արդի բարեփոխումները և ֆիզիկայի ուսուցման մեթոդիկայի հիմնախնդիրները ավագ դպրոցում, <p>Լազերային նյութերի մշակում և ֆիզիկական հատկությունների հետազոտում:</p> <p>Ամբիոնի 7 աշխատակիցներ ընդգրկված են Գիտության Կոմիտեի կողմից ֆինանսավորվող ենթակառուցվածքների պահպանման և զարգացման բազային ֆինանսավորման <<Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիա >> գիտական</p>

լաբորատորիայի աշխատակազմում. ծրագրի և լաբորատորիայի ղեկավար Է. Կոկանյան:

Ամբիոն ՊՂԱ և ուսանողների գիտակառնագոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տպագրվել է 10 հոդված հեղինակավոր ամսագրերում, որից 4-ը ցիտվում են Scopus համակարգում: Ամբիոնի մագիստրոսներից Վ. Մկրտչյանը հաշվետու տարվա ընթացքում հեղինակել է 2 հոդված:

Ամբիոնի աշխատակիցները և ուսանողները մասնակցել են միջազգային կոնֆերանսների, հանդես են եկել բանավոր զեկույցներով`

- Ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը սեպտեմբերի 14-16-ը ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մասնակցել է Laser Physics-22 ամենամյա միջազգային կոնֆերանսին (ք.Աշտարակ), հանդես է եկել բանավոր զեկույցով:
- Ամբիոնի մասնագետ Ն.Մխիթարյանը սեպտեմբերի 14-16-ը ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մասնակցել է Laser Physics-22 ամենամյա միջազգային կոնֆերանսին (ք.Աշտարակ), հանդես է եկել բանավոր զեկույցով:

Ամբիոնի մագիստրոսներ Մ.Մարգարյանը, Ս. Գալստյանը և Վ. Մկրտչյանը հաշվետու տարվա ընթացքում մասնակցել են միջազգային կոնֆերանսների հանդես են եկել բանավոր զեկույցներով /Մանրամասն ներկայացված է Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ աղյուսակում/:

Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:

Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիայի հետ համագործակցության շրջանակներում լազերային նյութերի մշակման և ֆիզիկական հատկությունների հետազոտման արդյունքում պատրաստվել են ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր:

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
K.H.Aharonyan, A.Zh Khachatryan, E. P.Kokanyan	Screened impurities in the four-layer MOS system	(National Polytechnic University of Armenia Bulletin, Collection of Scientific Papers), Yerevan 2022
K.H.Aharonyan, E. M.	Dielectric confinement affected exciton-	Proceedings of the 9th Int.

Kazaryan, E. P.Kokanyan	polariton properties of the semiconductor nanowires	Symposium Optics-2022, Springer Proceedings in Physics, Optics & its applications - https://doi.org/10.1007/978-3-031-11287-4_4
Taroyan, A. S. ; Kokanyan, E. P. ; Taroyan, Yu. A. ; Mkhitarian, N. N.	Phenomena of Absorption of Soft and Hard Components of Space Rays in the Atmosphere in Yerevan Conditions	Armenian Journal of Physics 15,2_3,42-45, Yerevan, Armenia, English 2022
G. Demirkhanyan, N. Kokanyan, M. Aillerie, and E. Kokanyan	"Spectroscopic Properties of LiNbO ₃ -Er ³⁺ Crystal in the Wavelength of 1470–1635 nm"	Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences),57, N4, 352-357, Yerevan, Armenia, English, 2022
G. Demirkhanyan, B. Patrizi, R. Kostanyan, J. Lie, A. Pirri, Y. Feng, T. Xie, L. Wu, M. Vannini, M. Becucci, D. Zargaryan, G. Toci	"Evidence of two Yb ³⁺ crystallographic sites occupancy in Y ₃ Al ₅ O ₁₂ ceramics from an in depth spectroscopic analysis"	J. of Solid State Chemistry - doi.org/10.1016/j.jssc.2022.123577
"G. Demirkhanyan, B. Patrizi, G. Toci, M. Vannini, A. Pirri, J. Lie, Y. Feng, D. Zargaryan, R. Kostanyan"	YAG-Yb Ceramics as a Material for Radiation Balanced Lasing	J. of Contemp. Phys. (Armenian Academy of Sci.), DOI: 10.3103/S1068337222020098

Թարոյան Ա.Ս., Կոկանյան Է.Պ., Թարոյան ՅՈՒ.Ա., Մխիթարյան Ն.Ն.	Տիեզերական ճառագայթների կլանումը կապարում և մթնոլորտային օդում Երևան քաղաքի պայմաններում:	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, «Գիտական տեղեկագիր», 1 42,65-74, Երևան 2022
Г. Демирханяна, Н. Мхитаряна, Н. Коканяна, М. Айллерри и Э. Коканян	Кристалл LiNbO ₃ :Tm ³⁺ : Материал для радиационно балансируемого лазера в области длин волн 1650 – 2000 нм	Известия НАН РА. Физика- Ուղարկվել է տպագրության
А.В. Еганяна, Н.Э. Коканяна, М. Айллерри, Э.П.Коканян	Поглощения гиперзвуковых волн в монокристаллах ниобата лития	Известия НАН РА. Физика- Ուղարկվել է տպագրության

Բ. Ուսանողական

Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ		
Ուսանող Ա. Ա. Հ	կուրս	Գիտական հետազոտական ընկերություն
Սկրտչյան Վարդուհի	ԱՄ 2-րդ	ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան
Գալստյան Ստելա	ԱՄ 2-րդ	Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)
Մարգարյան Մերի	ԱՄ 2-րդ	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ

Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ			
Դասախոս Ա.Ա.Հ.	Ուսանող Ա.Ա.Հ.	Հոդվածի անուն	Հրատ.անվ-մ
Կոկանյան Է.ՊՊ Դեմիրխանյան Գ.Գ.	Մխիթարյան Նունե Նորիկի	Кристалл LiNbO ₃ :Tm ³⁺ : Материал для радиационно балансируемого лазера в области длин волн 1650 – 2000	Известия НАН РА. Физика- Ուղարկվել է

		HM	տպագրության
--	--	----	-------------

Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ		
Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/	Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ	Ուսանողական զեկույց / քանակ
Կոնֆերանս / Միջազգային /	Стажировка молодых ученых и специалистов стран СНГ /Дубна Россия/	Գալստյան Ստելա
Կոնֆերանս / Միջազգային /	The XXVI International Scientific Conference of Young Scientists and Specialists /Dubna, Russia/	Գալստյան Ստելա – “Preparation and study of Graphene/ LN heterojunction for sensorial application”-Oral report
Կոնֆերանս / Միջազգային /	The annual International Conference Laser Physics 2022	Մարգարյան Մերի /առանց զեկույց/
Կոնֆերանս / Միջազգային /	Space sciences and Technologies /Byurakan, Armenia/	Մկրտչյան Վարդուհի /առանց զեկույցի/
Կոնֆերանս / Միջազգային /	The 8th Byurakan International Summer School (8BISS) for Young Astronomers /online/	Մկրտչյան Վարդուհի /առանց զեկույցի/

- ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում:
<p>Ամբիոնը համագործակցում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի, 2. Ֆրանսիայի Լորենի համալսարանի Օպտիկական Նյութերի և Ֆոտոնիկական համակարգերի լաբորատորիայի (LMOPS):

<p>3. Իտալիայի Պադովայի համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի,</p> <p>4. Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Անտոնիոյի և Բոզեմանի համալսարանների ֆիզիկայի ֆակուլտետների հետ:</p> <p>Ֆրանսիայի Լորենի համալսարանի Օպտիկական Նյութերի և Ֆոտոնիկական համակարգերի լաբորատորիայի (LMOPS) պրոֆեսոր Միշել Այլերին հանդիսանում է 21T-1C275- « Գրաֆեն/լիթիումի նիոբատ հետերոկառուցվածքի հիմքով դաշտային տրանզիստոր տերահերցային տիրույթի մոդուլյատորի համար » /զեկ. Է. Կոկանյան/ դրամաշնորհային ծրագրի պաշտոնական արտասահմանյան խորհրդատու:</p>
<p>Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:</p>
<p>Ամբիոնը համագործակցում է Իտալիայի Պադովայի համալսարանի, Ֆրանսիայի Լորենի համալսարանի և ԱՄՆ-ի Սան Անտոնիոյի համալսարանների հետ, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետ:</p> <p>Հաշվետու տարվա ընթացքում համատեղ հետազոտությունների շրջանակներում տպագրվել են 4 հոդվածներ, որոնք ներառված են Scopus շտեմարանում:</p>

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ					
Բուհ/ամբիոն /երկիր	Համագործակցության ձևը				
	Ուսումնական	Մեթոդական	Գիտական	Հետազոտական	Այլ
Լորենի համալսարան , Ֆրանսիա	-	-	✓	✓	-
Պադովայի համալսարան , Իտալիա	-	-	✓	✓	-
Բոզեմանի համալսարան , ԱՄՆ	-	-	✓	✓	-
Սան Անտոնիոյի	-	-	✓	✓	-

համալսարան , ԱՄՆ				
---------------------	--	--	--	--

- ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Ուսանողների հավաքագրմանը, աշակերտների մասննագիտական կողմնորոշմանն ուղղված իրականացվել են մի շարք միջոցառումներ ֆակուլտետի ներսում, որին իր մասնակցությունն է ունեցել ամբիոնը, մանավորապես կազմակերպվել են այցելություններ հանրապետության տարբեր դպրոցներ, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել են ամենամայա առցանց մրցույթներ (սկսած 2021թ նոյեմբերից) մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից, որին մասնակցել են թվով 30 աշակերտներ: ՀՊՄՀ դիմորդների համար ֆակուլտետում առցանց և առերես ձևաչափերով կազմակերպվել են անվճար պարապմունքներ և ֆիզիկա առարկայից պարապմունքները անցկացրել է Գ. Դեմիրխանյանը:

Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Ուսումնական	Բաբաջանյան Ն.	Խնդրագրքերի տրամադրում	Ուսումնական տարի
Մեթոդական	Բաբաջանյան Ն.	1.Լաբորատոր փորձերի իրականացում, 2.Մեթոդական նյութերի տրամադրում:	Ուսումնական տարի
	Դանիելյան Ա.	1.Լաբորատոր փորձերի իրականացում, 2.Մեթոդական նյութերի տրամադրում:	Ուսումնական տարի

Աշխատանք հանրության շրջանում			
Աշխ-ի տեսակը	Համակարգող Ա.Ա.Հ.	Միջոցառման անվանումը	Ժամկետը
Աշխատանքը հանրակրթական դպրոցների աշակերտների հետ	Բաբաջանյան Ն.Է	Մանկավարժական պրակտիկա	Մանկավարժական պրակտիկայի ժամանակահատվածում /հոկտեմբեր/
Աշխատանքը հանրակրթական դպրոցների աշակերտների հետ	Դանիելյան Ա.Վ	Մանկավարժական պրակտիկա	Մանկավարժական պրակտիկայի ժամանակահատվածում /նոյեմբեր-դեկտեմբեր/

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
<p>Ամբիոնի գործունեությունը մեծապես ուղղված է ուսուցման որակի բարձրացմանը: Որակի ապահովման ուղղված աշխատանքներից են՝</p> <ul style="list-style-type: none"> • SS տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում • Առցանց լաբորատոր աշխատանքների հարթակի օգտագործում • classroom էլեկտրոնային հարթակը • Փոխադարձ դասալսումները

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
ՀՊՄՀ էլեկտրոնային Google classroom հարթակում կատարված աշխատանքների մշտադիտարկում՝ թեմատիկ	Ամբիոնի վարիչ Ամբիոնի որակի	Դասընթացների մշտադիտարկում


<p>տրոհումների, առարկայական նկարագրերի, հարցաշարերի առկայություն, ուսումնական նյութերի առկայություն:</p> <p>2. Առցանց հարթակի աշխատանքային գործիքների լիարժեք օգտագործում:</p> <p>3. Հնարավոր ինտերակտիվ մեթոդների կիրառում</p>	<p>պատասխանատու</p> <p>Ամբիոնի մասնագետ</p>	
---	---	--

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Գիտական ներուժ,	1. Բակալավրիատում ուսանողների սակավություն,
2. Լայն համագործակցությունը թե՛ հայաստանյան, թե՛ արտասահմանյան գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների հետ,	2. Դպրոցների իրազեկման աշխատանքների ոչ բավարար մակարդակ:
3. Գիտական լաբորատորիայի առկայություն(Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիա),	
4. Երիտասարդ և բանիմաց պրոֆեսորադասախոսական կազմ,	
5. Գիտական հրապարակումների մեծաքանակություն և դրանց բարձր չափանիշների առկայություն:	
Հնարավորություններ	Վտանգներ
1. Համագործակցության շրջանակների լայնացում գրանտային համակարգերում ընդգրկվելու նպատակով,	1. Մագիստրատուրայում ուսանողների հոսքի նվազում,
2. Ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայտնի գիտական	2. Տարբեր Բուհական համակարգերում մանկավարժների պատրաստման

<p>կենտրոնների պրոֆեսորադասախոսական կազմի ընդգրկման հնարավորություն ամբիոնի սեմինարներին և դասախոսություններին,</p>	<p>հնարավորության տրամադրումը նախարարության կողմից:</p>
<p>3.Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցության հնարավորություն տեղական և արտասահմանյան միջազգային կոնֆերանսներին:</p>	

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ս. Միխայրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N⁰³

2023թ փետրվարի 6-ին ժամը 12²⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022- 2023 ուստարվա N⁰³ նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:

2. ընթացիկ հարցեր

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի, հարցաշարերի հաստատումն է: Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի 1-4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Ըստ կարգի յուրաքանչյուր կիսամյակի սկզբում պետք է հաստատվեն դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Ինչպես առաջին կիսամյակում որոշվել էր ուսանողներին դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես էլ ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով:

Քննարկման արդյունքում միաձայն`

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների թեմատիկ տրոհումները:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների հարցաշարերը:

Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքին: Հանձնարարվեց երկուշաբաթյա ժամկետում ներկայացնել հաշվետվությունների ուսանողների կատարած աշխատանքերի մասին: Հաջորդ նիստով նախատեսվում է ավարտական կուրսերի ատեստավորումը:

Ընթացիկ հարցերից անդրադարձան 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը: Ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Ն. Բաբաջանյանը նշեց, որ այս ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ուսումնական պրակտիկաները կազմակերպվելու են առերես: Ն. Բաբաջանյանը ներկայացրեց, որ 2-րդ կիսամյակում 5 շաբաթ մանկավարժական պրակտիկա ունեն բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները, ովքեր իրենց պրակտիկան անցկացնելու են առերես ՀՊՄՀ հիմնական դպրոցում և առկա բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողները, շարունակական պրակտիկա, շաբաթական 1 օր և 2 շաբաթ մանկավարժահետազոտական պրակտիկա ունեն առկա մագիստրատուրայի 1-ին, հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողները, որոնց պրակտիկան կազմակերպվելու և անցկացվելու է ՀՊՄՀ-ում ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Մագիստրոսները կկցվեն իրենց գիտական ղեկավարների դասընթացներին՝ բակալավրիատի կուրսերում և հնարավորության դեպքում կվարեն դասեր: Բացի դա, ըստ ամբիոնում ընդունված ձևաչափի մագիստրոսներին հանձնարարվում է պատրաստել առաձին դասընթացների առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհումներ, դրանց հիման վրա կազմում են թղթապանակներ: Պրակտիկայի ավարտին կազմակերպվում են պրակտիկայի պաշտպանություն, ըստ նախապես սահմանված գրաֆիկի:

Պրակտիկաների համար ևս classroom հարթակում ստեղծվել են առանձին դասընթացներ, որտեղ տեղադրվում են ուսանողների կատարած աշխատանքները, ընթացիկ հաշվետվությունները և վերջում թղթապանակները:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ն. Մխիթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°4

2023թ մարտի 20-ին ժամը 12²⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022- 2023 ուստարվա N°4 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1.Ավարտական ամփոփիչ քննությունների կազմակերպման մասին

2.1-ին և 2-րդ կուրսի մագիստրոսների ատեստավորման մասին

3.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի 1-ին հարցը վերաբերում էր 2022-2023 ուստարում ամփոփիչ քննությունների կազմակերպման ընթացքի մասին: Է. Կոկանյանը նշեց, որ այս տարի ևս քննությունները կազմակերպվելու և անցկացվելու են առերես: Նշվեց, որ առկա բակալավրիատի 4-րդ և մագիստատուրա 2-րդ կուրսերի նաժապաշտպանությանունը նշանակված է ապրիլի 21-ին, իսկ հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանությանունը մայսի 4-ին:

Մյուս հարցով անդրադարձան 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսների ատեստավորմանը: Է Կոկանյանը նշեց, որ նախորդ նիստով /06.02.2022թ. արձ.3 / հանձնարարվել էր ներկայացնել հաշվետվություն մագիստրոսական և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: Ներկայացվեցին մագիստրոսների հաշվետվությունները և ղեկավարների կարծիքները, չնայած ուսանողների աշխատանքներում առկա որոշ թերացումներին, որոշեցին ատեստավորել առկա և հեռակա համակարգի մագիստրատուրայի 1-ին և 2-րդ ուսանողների և ուսանողներին 1 ամիս ժամանակ տրամադրել թերությունները վերացնելու համար: Հիմնվելով ուսանողների ներկայացրած աշխատանքների և հաշվետվությունների վրա, որոշեցին`

Որոշեցին ատեստավորել առկա և հեռակա համակարգի 1-ին կուրսի մագիստրոսներին:

Որոշեցին ատեստավորել առկա համակարգի 2-րդ կուրսի մագիստրոսներին:

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքներին: Նշվեց, որ Google classroom հարթակում տարվող աշխատանքները մշտապես վերահսկվում են ամբիոնի կողմից, ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանը ամեն ամիս

մշտադիտարկում է անցկացնում հարթակում և պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվում Կրթության էլեկտրոնային կառավարման /ԿԷԿ/ բաժին: Այնուհանդերձ որոշ դասընթացներում առկա են թերություններ, հորդորեց առկա թերությունները շտկել կարճ ժամանակահատվածում:

Նիստի նախագահ

Է.Կոկանյան

Նիստի քարտուղար

Ն.Սիմոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°5

2023թ ապրիլի 21-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022- 2023 ուստարվա N°5 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն

2. Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանություն

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Նիստին մասնակցում էին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 8 (Արշակյան Սուսան` վերականգնվել է իր դիմումի համաձայն) և բակալավրիատի թվով 2 ուսանողների մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը կազմակերպելու համար classroom հարթակում ստեղծված դասընթացում ուսանողները տեղադրել էին իրենց աշխատանքները և տեսաներկայացումները:

Ուսանողները ելույթների ընթացքում ներկայացրեցին մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նպատակը, հիմնական խնդիրները, արդիականությունը և կատարված աշխատանքները հակիրճ:

Ուսանողների ելույթների, ինչպես նաև գիտական ղեկավարների կարծիքների հիման վրա`

Որոշեցին ատեստավորել 2022-2023 ուստարվա մագիստրատուրա 2-րդ կուրսի թվով 8 ուսանողներին և մագիստրոսական թեզերը երաշխավորել պաշտպանության:

1. Արշակյան Սուսան (վերականգնվել է իր դիմումի համաձայն)
Գիտական ղեկավար` Կոկանյան Է.
2. Ոսկանյան Ֆրիդա Գիտական ղեկավար` Կոկանյան Է.
3. Գալստյան Ստելա Գիտական ղեկավար` Եգանյան Ա.
4. Մարկոսյան Նախշուն Գիտական ղեկավար` Բաբաջանյան Ն.
5. Մկրտչյան Վարդուհի Գիտական ղեկավար` Բաբաջանյան Ն.
6. Գալստյան Նոնա Գիտական ղեկավար` Ղազարյան Է.
7. Ալեքսանյան Արմինե Գիտական ղեկավար` Ահարոնյան Կ.
8. Մարգարյան Մերի Գիտական ղեկավար` Իշխանյան Ա.

Որոշեցին ատեստավորել 2022-2023 ուստարվա բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 2 ուսանողներին և ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

1. Պետրոսյան Քրիստինե
2. Հարությունյան Մարիամ

Գիտական ղեկավար՝ Սաֆարյան Ն.
Գիտական ղեկավար՝ Ղազարյան Է.

Է. Կոկանյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի և ավատական աշխատանքների ամփոփիչ որակավորման քննության օրը նշանակված է մայիսի 31-ին:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Ն. Սիհթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

2023թ մայիսի 4-ին ժամը 12³⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022- 2023 ուստարվա N°6 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2023- 2024 ուս.տարվա ընդունելության մասին
2. Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության
3. Ընթացիկ հարցեր:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Առաջին հարցով Է. Կոկանյանը անդրադարձավ 2023-2024 ուստարվա ընդունելությանը: Նա նշեց, որ Կառավարության որոշմամբ նախատեսվում է 70000 ՀՀ դրամ կրթաթոշակ բնագիտական բաժինների առկա համակարգի ուսանողների համար, ինչը շատ լուրջ խթան պետք է լինի: Ակնկալվում է, որ այս ուսումնական տարում դիմորդների թիվը պայմանավորվաշ առաջարկվող կրթաթոշակով զգալի կավելանա: Միևնույն ժամանակ Է. Կոկանյանը հիշեցեց, որ մշտապես ուշադրության կենտրոնում պետք է պահել դպրոցների այցելությունները և անմիջական այցելությունների ժամանակ ներկայացնել այդ առավելությունները:

Հաջորդ հարցով անդրադարձան հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 4 ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությանը: Նախապաշտպանության համար classroom հարթակում ստեղծված դասընթացում ուսանողները տեղադրել էին իրենց աշխատանքները և տեսաներկայացումները:

Ուսանողները ելույթների ընթացքում ներկայացրեցին ավարտական աշխատանքների նպատակը, հիմնական խնդիրները, արդիականությունը և կատարված աշխատանքները հակիրճ:

Ուսանողների ելույթների, ինչպես նաև գիտական ղեկավարների կարծիքների հիման վրա՝ Որոշեցին ատեստավորել 2022-2023 ուստարվա հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 4 ուսանողներին ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

1. Խաչատրյան Վարդան Գիտական ղեկավար՝ Դանիելյան Ա.
2. Համբարձումյան Դիանա Գիտական ղեկավար՝ Դանիելյան Ա.
3. Աղաջանյան Ռոզա Գիտական ղեկավար՝ Թարոյան Ա.
4. Վարդանյան Ռիմա Գիտական ղեկավար՝ Թարոյան Ա.

Է. Կոկանյանը նշեց, որ ավատական աշխատանքների ամփոփիչ որակավորման քննության օրը նշանակված է հունիսի 7-ին:

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքներին: Նշվեց, որ Google classroom հարթակում տարվող աշխատանքները մշտապես վերահսկվում են ամբիոնի կողմից, ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանը ամեն ամիս մշտադիտարկում է անցկացնում հարթակում և պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվում Կրթության էլեկտրոնային կառավարման /ԿԷԿ/ բաժին: Այնուհանդերձ որոշ դասընթացներում առկա են թերություններ, հորդորեց առկա թերությունները շտկել կարճ ժամանակահատվածում:

Նիստի նախագահ

Է. Կոկանյան

Նիստի քարտուղար

Ն. Մխիթարյան